ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. *«ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը»* ղեկավար ձեռնարկը սահմանում է բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը, ընդհանուր բովանդակությունը և ուսանողի բեռնվածությունը:
2. Բակալավրի կրթական ծրագիրը բաղկացած է 2 հիմնական՝ ընդհանուր կրթական և մասնագիտական կառուցամասերից, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքներն առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար իրականացվում են ըստ Աղյուսակ 1-ում և Աղյուսակ 2-ում ներկայացված աշխատածավալների համամասնության:

Աղյուսակ 1.

Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի ընդհանուր կրթական և մասնագիտական կառուցամասերի հարաբերակցությունը

Կիսամյակ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	Ընդա-մենը
Ընդհանուր կրթական կառուցվածք, *կրեդիտ*	30		8		0	0	0	0	38
Մասնագիտական կառուցվածք, *կրեդիտ*	32		54		30	30	30	26	202
Ընդամենը, *կրեդիտ*	31	31	31	31	30	30	30	26	240

Աղյուսակ 2.

Հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի ընդհանուր կրթական և մասնագիտական կառուցվածքների հարաբերակցությունը

Կիսամյակ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	Ընդա մենը
Ընդհանուր կրթական կառուցվածք, *կրեդիտ*	30		8		0	0	0	0	0	0	38
Մասնագիտական կառուցվածք, *կրեդիտ*	18		40		24	24	24	24	22	26	202
Ընդամենը, *կրեդիտ*	24	24	24	24	24	24	24	24	22	26	240

3. Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի տևողությունը 4 տարի է (8 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողություն, որից 15 շաբաթը հատկացվում է լսարանային պարապմունքներին, 2-ը՝ ընթացիկ քննություններին և ստուգարքներին, իսկ 3-ը՝ եզրափակիչ քննություններին:
4. Հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի տևողությունը 5 տարի է (10 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողություն,որից 4 շաբաթը հատկացվում է լսարանային պարապմունքներին, 8-ը՝ ինքնուրույն աշխատանքին, խորհրդատվություններին և ընթացիկ քննություններին, իսկ 4-ը՝ եզրափակիչ քննություններին: Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ և ռեկտորի թույլտվությամբ լսարանային պարապմունքները տրված ժամաքանակների սահմաններում կարող են իրականացվել նաև այլ ժամանակացույցով:
5. Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական բեռնվածությունը կազմում է 240 կրեդիտ՝ առկա ուսուցման մեկ կիսամյակի համար 30 կրեդիտ (10% թույլատրելի շեղումով), իսկ հեռակաուսուցման դեպքում՝ 24 կրեդիտ (10% թույլատրելի շեղումով): Ուսանողի շաբաթական լրիվ ուսումնականբեռնվածությունն առկա և հեռակա ուսուցման համակարգերում 1,5 կրեդիտ է (30 կրեդիտ/20 շաբաթ=1,5 և 24 կրեդիտ/16 շաբաթ=1,5) կամ 45 ժամ: Ուսումնական մեկ կրեդիտի ժամային համարժեքը

կազմում է 30 ժամ։

6. Ընդհանուր կրթական կառուցամասի աշխատածավալը ուսումնական բեռնվածությունում կազմում է 38 կրեդիտ (16 %), իսկ մասնագիտական կառուցամասինը՝ 202 կրեդիտ (84 %)։ Ընդհանուր կրթական կառուցամասը ներառում է պարտադիր և կամընտրական դասընթացներ։ Մասնագիտական կառուցամասը ներառում է պարտադիր, կամընտրական, հատուկ մասնագիտական, հարակից կրթական ծրագրերից ընտրված դասընթացներ, ինչպես նաև կրթական այլ մոդուլներ՝ պրակտիկա(ներ) և 20 կրեդիտ ծավալով ավարտական աշխատանք)։

7. Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական առավելագույն լսարանային բեռնվածությունը 1-4-րդ կիսամյակներում կազմում է մինչև 30 ժամ, իսկ 5-7-րդ կիսամյակներում՝ մինչև 28 ժամ (ներառյալ պրակտիկաները)։ Առկա ուսուցման 8-րդ և հեռակա ուսուցման 10-րդ կիսամյակներում լսարանային բեռնվածություն չի նախատեսվում։ Կրթական այն ծրագրերում, որտեղ նախատեսվում է ուսումնական պրակտիկա (կամ պրակտիկայի այլ ձևեր), տվյալ կիսամյակի լսարանային ընդհանուր բեռնվածությունը (այդ թվում՝ պարտադիր մասնագիտական դասընթացների քանակը, կրեդիտների ընդհանուր թիվը) համապատասխանաբար նվազում է։ Կիսամյակի ընթացքում պրակտիկայի բեռնվածությունը ներառվում է կիսամյակի ընդհանուր բեռնվածության մեջ։

8. Հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի

դասընթացների լսարանային աշխատանքի ժամաքանակը կազմում է առկա ուսուցման ձևի լսարանային ժամերի 1/3-ը, իսկ մնացած ժամաքանակը նախատեսվում է ուսանողի ինքնուրույն աշխատանքի համար։

9. Ծրագրի դասընթացների՝ կրեդիտներով արտահայտված աշխատածավալը հաշվարկվում է՝ ելնելով Աղյուսակ 3-ում ներկայացված ժամային համամասնություններից[1]։

Աղյուսակ 3.

Ուսանողի ինքնուրույն աշխատանքի բեռնվածության որոշման նորմերը

Դասընթաց/ուսումնական մոդուլ			
Շաբաթական լսարանային պարապմունք			Շաբաթական ինքնուրույն աշխատանք
ժամ	*պարապմունքի ձևը*		*ժամ*
1	դասախոսություն[2]	+	1-2
1	սեմինար/գործնական	+	0.75 – 1.5
1	լաբորատոր	+	0.5-1

1. Դասընթացի (ուսումնական մոդուլի) շաբաթական

[1] Դասընթացի կրեդիտը (աշխատածավալը) պայմանավորված է պարապմունքի ձևով, դասավանդման և ուսումնառության մեթոդներով, դասընթացիբովանդակային առանձնահատկություններով և այլն։ Միևնույն լսարանային ժամաքանակի պարագայում տարբեր դասընթացներ կարող են ունենալ տարբեր աշխատածավալներ, հետևաբար նաև տարբեր կրեդիտներ։

[2] Պահանջվող ինքնուրույն աշխատանքի շաբաթական ժամաքանակը տրված միջակայքում որոշում է ամբիոնը՝ հաշվարկելով 1 ժամ լսարանային պարապմունքի ընթացքում մատուցված նյութը յուրացնելու համար ուսանողից պահանջվող իրական ժամաքանակը։

լրիվ աշխատածավալը որոշվում է ուսանողի լսարանային և ինքնուրույն աշխատանքի ժամաքանակների գումարով: Ուսանողից պահանջվող ինքնուրույն աշխատանքի ծավալը պայմանավորված է լսարանային պարապմունքի ձևով և համապատասխան ժամաքանակով: Լսարանային ժամաքանակի և ինքնուրույն աշխատանքի հանրագումարը կազմում է դասընթացի շաբաթական լրիվ աշխատածավալը:

2. Դասընթացին հատկացվող կրեդիտների քանակը որոշվում է՝ շաբաթական լրիվ բեռնվածությունը բազմապատկելով 15 շաբաթով և արդյունքը բաժանելով 30 ժամի:
3. Դասընթացին հատկացվող լսարանային ընդհանուր ժամաքանակը չի կարող գերազանցել ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամաքանակը:

4. Առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրերի ուսումնական պլանների ձևաթերթերը ներկայացված են կից հավելվածներում:

2. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2.1. Ընդհանուր կրթական կառուցամաս

Ընդհանուր կրթական կառուցամասն ապահովում է բակալավրի որակավորման համար անհրաժեշտ ընդհանրական/փոխանցելի գիտելիքները և կարողությունները:

10. ***Պարտադիր դասընթացների*** ընդհանուր աշխատածավալը 34 կրեդիտ է: Այն ներառում է 12 դասընթաց (Ֆիզդաստիարակությանը կրեդիտ չի հատկացվում) (տե՛ս Հավելված 1, 2, 3 և 4): Այս դասընթացներն իրականացվում են 1-ին և 2-րդ կուրսերում և միտված են ուսանողների ընդհանրական (փոխանցելի) գիտելիքների և կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:
11. ***Կամընտրական դասընթացների*** ընդհանուր աշխատածավալը 4 կրեդիտ է և ներառում է 2 կրեդիտ աշխատածավալով 2 դասընթաց (ուսումնական մոդուլ) (տե՛ս Հավելված 1, 2, 3 և 4): Կամընտրական դասընթացները միտված են ուսանողների սոցիալ-տնտեսական, բնագիտական և մշակութային ընդհանուր գիտելիքների ձևավորմանը և զարգացմանը: Կամընտրականդասընթացներն իրականացվում են 2-րդ կուրսում, իսկ ուսանողների կողմից դրանց ընտրությունը կատարվում է 1-ին կուրսի 2-րդ կիսամյակում՝ մինչև ապրիլի 1-ը: Կամընտրական դասընթացների իրականացումը համակարգում է Ուսումնամեթոդական

վարչությունը: Կամընտրական դասընթացն իրականացվում է, եթե դրանում ընդգրկված են նվազագույն թվով ուսանողներ (համաձայն ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերի): Անհրաժեշտության դեպքում կարող են ձևավորվել միջֆակուլտետային հոսքեր:

2.2. Մասնագիտական կառուցվածք

Մասնագիտական կառուցվածքը, որտեղ ներառված են պարտադիր մասնագիտական, կամընտրական կամ հատուկ մասնագիտական, հարակից կրթական ծրագրերից ընտրված դասընթացներ և կրթական այլ մոդուլներ, ապահովում է բակալավրի որակավորման մասնագիտական հենքային գիտելիքների և կարողությունների ձևավորումը և զարգացումը:

13. ***Պարտադիր մասնագիտական դասընթացների*** աշխատածավալը 149 կրեդիտ է, իսկ հատուկ մասնագիտական դասընթացների առկայության պարագայում՝ 137 (տե՛ս Հավելված 1, 2, 3 և 4): Այս կրթամասի բովանդակությունը, դասընթացները և դրանց կրեդիտատարությունը որոշում են կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանումները (ֆակուլտետ, ինստիտուտ, կենտրոն)՝ ապահովելով բակալավրի կրթական մակարդակում տվյալ մասնագիտության համար պահանջվող գիտելիքների, կարողությունների և

հմտությունների ձեռքբերումը։ Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով որակավորումների ազգային (առկայության դեպքում նաև ոլորտային) շրջանակների և մասնագիտական աշխատաշուկայի արդի պահանջները, ինչպես նաև տվյալ մասնագիտության միջազգային ծրագրային չափանիշները և հենանիշները։

14. ***Կամընտրական մասնագիտական դասընթացներն*** ապահովում են ուսանողի նեղ մասնագիտական նախասիրություններով պայմանավորված հատուկ գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը։ Կամընտրական մասնագիտական դասընթացների ընդհանուր աշխատածավալը 12 կրեդիտ է։ Առաջարկվող դասընթացների ցանկը ներառում է ընտրվող դասընթացների քանակից ավելի և միևնույն կրեդիտատարությամբ դասընթացներ։ Այս կամընտրական դասընթացներն իրականացվում են 5-7-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 7-9-րդ) կիսամյակներում։

15. ***Հատուկ մասնագիտական դասընթացներ։*** Ելնելով մասնագիտության առանձնահատկություններից՝ կրթական ծրագրի կառուցվածքում կամընտարական մասնագիտական դասընթացների փոխարեն կարող են նախատեսվել հատուկ մասնագիտական դասընթացներ, որոնք ապահովում են նեղ մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը։ Հատուկ մասնագիտական դասընթացների ընդհանուր ուսումնական աշխատածավալը 24 կրեդիտ է։ Դասընթացներն իրականացվում են 5-7-րդ (հեռակա

ուսուցման դեպքում՝ 7-9-րդ) կիսամյակներում:

16. *Հարակից կրթական ծրագրերից ընտրված դասընթացներ:* 6-7-րդ կիսամյակներում (հեռակա ուսուցման դեպքում՝ 8-9-րդ) նախատեսվում է «Շարժունության պատուհան», ինչը հնարավորություն է ընձեռում ուսանողին, կրթական ծրագրի ղեկավարի համաձայնությամբ, դասընթացներ ընտրել ինչպես բակալավրի հարակից կրթական ծրագրերի, այնպես էլ այլ բուհերի կողմից առաջարկվող դասընթացների ցանկից: Հարակից կրթական ծրագրերից ընտրված դասընթացների ընդհանուր աշխատածավալը 15 կրեդիտ է: Դասընթացներն ընտրվում են 4-րդ և 6-րդ (հեռակաուսուցման դեպքում՝ 6 և 8-րդ) կիսամյակներում՝ մինչև ապրիլի 1-ը: Դասընթացն իրականացվում է, եթե դրանում ընդգրկված են նվազագույն թվով ուսանողներ (ուսանողների նվազագույն թիվը սահմանվում է ըստ գործող նորմերի):

17. *Կրթական այլ մոդուլներ:* Ծրագրի կրթական այլ մոդուլների աշխատածավալը 26 կրեդիտ է, որը ներառում է 6 կրեդիտ աշխատածավալով մասնագիտական պրակտիկա (կրթական ծրագրի առանձնահատկություններից ելնելով՝ կարող է ներառվել նաև համապատասխան աշխատածավալով ուսումնական պրակտիկա) և 20 կրեդիտ աշխատածավալով ավարտական աշխատանք:

    1. Մասնագիտական պրակտիկան կազմակերպվում է 8-րդ(հեռակա ուսուցման դեպքում՝ 10-րդ) կիսամյակում՝ կրթական ծրագրեր իրականացնող համապատասխան ստորաբաժանման կողմից կազմված և հաստատված

ծրագրով: Այն իրականացվում է մասնագիտական ուղղվածություն ունեցող ձեռնարկություններում և հաստատություններում՝ 6 կրեդիտ աշխատածավալով՝ 6-շաբաթյա տևողությամբ, որն ավարտվում է ստուգարքով: Ուսանողները ներկայացնում են սահմանված ձևաչափի և բովանդակության հաշվետվություն պրակտիկայի կատարման վերաբերյալ: Մասնագիտությամբ աշխատող ուսանողն ազատվում է մասնագիտական պրակտիկայից՝ աշխատանքի վայրից ներկայացնելով համապատասխան տեղեկանք:

2. Կրթական ծրագրում կարող են նախատեսվել նաև պրակտիկայի այլ ձևեր, որոնց իրականացման կիսամյակը և կրեդիտատարությունը (շաբաթները) որոշում է կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանումը (ֆակուլտետ, ինստիտուտ, կենտրոն) (պահպանելով 1 շաբաթ՝ 1 կրեդիտ համամասնությունը):

3. Ավարտական աշխատանքը բակալավրի կրթական ծրագրի անհատական և ամփոփիչ բաղադրիչն է, որի պատրաստումը և պաշտպանությունն առկա ուսուցման դեպքում իրականացվում է 8-րդ, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 10-րդ կիսամյակում: Մինչև 7-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 9-րդ) կիսամյակի ավարտը բոլոր ուսանողները պետք է ունենան համապատասխան ստորաբաժանման (ֆակուլտետ, ինստիտուտ, կենտրոն) կողմից

հրամանագրված ավարտական աշխատանքի թեմաներ և ղեկավարներ: Ավարտական աշխատանքի ձևաչափին և բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանված են «Երևանի պետական համալսարանում ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգում»:

3. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բակալավրի կրթական ծրագրի բաղկացուցիչ դասընթացների կազմն ու բովանդակությունը, ինչպես նաև դասավանդման, ուսումնառության և գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրվում են հետևյալ պաշտոնական և այլ միջազգային փաստաթղթերի պահանջներին համապատասխան.

1) *ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակ* (*որակավորումների ոլորտային շրջանակով* ՝ առկայության դեպքում)[3]:
2) ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման ղեկավար ձեռնարկ[4] և կրթական ծրագրի մասնագրի[5] լրացման ուղեցույց:
3) Տվյալ մասնագիտական ոլորտում կիրառվող միջազգային ծրագրային կողմնորոշիչներ և հենանիշներ (բենչմարքներ):

---

[3] ՀՀ կառավարության 2016 թ. հուլիսի 7-ի N 714-Ն որոշումը ՀՀ որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին:
[4] ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման ղեկավար ձեռնարկ, 2012 թ.:
[5] ԵՊՀ կրթական ծրագրի մասնագրի լրացման ուղեցույց, 2016 թ.:

ՀԱՎԵԼՎԱԾ-1.Առկա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի օրինակելի ձևաթերթ-1

Թվանիշ	Ուսումնական մոդուլի անվանումը	Կredիտներ	Ուսումնական բեռնվածությունը, ժամ					Կիսամյակներ																Գնահատման ձևը
								1		2		3		4		5		6		7		8		
			Ընդ.	Դասախ.	Գրք./սեմ.	Լաբ.	Ինք.	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	38	1140	180	390	0	570																	
	Պարտադիր դասընթացներ	34	1020	120	390	0	510																	
	Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	2	60	0	30	0	30	2	2															Ստ.
	Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2	2	60	0	30	0	30			2	2													Ստ.
	Հայոց պատմության հիմնահարցեր-1	2	60	15	15	0	30	2	2															Ստ.
	Հայոց պատմության հիմնահարցեր-2	2	60	15	15	0	30			2	2													Ստ.
	Անգլերեն/Գերմաներեն/Ֆրանսերեն/Արևելյան լեզու-1	4	120	0	60	0	60	4	4															Ստ.
	Անգլերեն/Գերմաներեն/Ֆրանսերեն/Արևելյան լեզու-2	4	120	0	60	0	60			4	4													Ստ.
	Ռուսերեն-1	4	120	0	60	0	60	4	4															Ստ.
	Ռուսերեն-2	4	120	0	60	0	60			4	4													Ստ.
	Քաղ. պաշտպան. և արտակարգ իրավիճ. բնակչ. առաջին բուժօգն.	4	120	30	30	0	60	4																Ստ.
	Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	2	60	30	0	0	30	2																Ստ.
	Փիլիսոփայության հիմունքներ	4	120	30	30	0	60					4												Ստ.
	Ֆիզդաստիարակություն	0							x		x		x		x									Ստ.
	Կամընտրական դասընթացներ	4	120	60	0	0	60																	
	Տնտեսագիտության հիմունքներ	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Գործարարության հիմունքներ	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Իրավունքի հիմունքներ	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Քաղաքագիտության հիմունքներ	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Կրոնագիտության հիմունքներ	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Մշակութաբանության հիմունքներ	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Հոգեբանության հիմունքներ	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Տրամաբանության հիմունքներ	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Բարոյագիտության հիմունքներ	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Սոցիոլոգիայի հիմունքներ	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	2	60		30	0	30					2												Ստ.
	ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	202																						
	Պարտադիր մասնագիտական դասընթացներ	149																						
	Դասընթաց-1																							
	Դասընթաց-2																							
	Կամընտրական մասնագիտական դասընթացներ	12																						
	Դասընթաց-1																							
	Դասընթաց-2																							
	Հարակից կրթական ծրագրերից ընտրված դասընթացներ	15																						
	Դասընթաց-1																							
	Դասընթաց-2																							
	Կրթական այլ մոդուլներ	26												0				0				26		
	Մասնագիտական պրակտիկա	6																				6		Ստ.
	Ավարտական աշխատանք	20																				20		Պաշտ.
	ԸՆԴԱՄԵՆԸ	240	1140	180	390	0	570	31	30	31	30	31	30	31	30	30	28	30	28	30	28	26	0	240
	Ուսումնական/գիտական մոդուլների քանակը																							

ՀԱՎԵԼՎԱԾ-2.Առկա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի օրինակելի ձևաթերթ-2

Թվանիշ	Ուսումնական մոդուլի անվանումը	Կredիտներ	Ուսումնական բեռնվածությունը, ժամ					Կիսամյակներ																Գնահատման ձևը
								1		2		3		4		5		6		7		8		
			Ընդ.	Դասախ.	Գրծ./սեմ.	Լաբ.	Ինք.	Կրդ.	Լ.ժ	Կրդ.	Լ.ժ	Կրդ.	Լ.ժ	Կրդ.	Լ.ժ	Կրդ.	Լ.ժ	Կրդ.	Լ.ժ	Կրդ.	Լ.ժ	Կրդ.	Լ.ժ	
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	38	1140	180	390	0	570																	
	Պարտադիր դասընթացներ	34	1020	120	390	0	510																	
	Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	2	60	0	30	0	30	2	2															Ստ.
	Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2	2	60	0	30	0	30			2	2													Ստ.
	Հայոց պատմության հիմնահարցեր-1	2	60	15	15	0	30	2	2															Ստ.
	Հայոց պատմության հիմնահարցեր-2	2	60	15	15	0	30			2	2													Ստ.
	Անգլերեն/Գերմաներեն/Ֆրանսերեն/Արևելյան լեզու-1	4	120	0	60	0	60	4	4															Ստ.
	Անգլերեն/Գերմաներեն/Ֆրանսերեն/Արևելյան լեզու-2	4	120	0	60	0	60			4	4													Ստ.
	Ռուսերեն-1	4	120	0	60	0	60	4	4															Ստ.
	Ռուսերեն-2	4	120	0	60	0	60			4	4													Ստ.
	Քաղ. պաշտպան. և արտակարգ իրավիճ. բնակչ. առաջին բուժօգն.	4	120	30	30	0	60	4																Ստ.
	Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	2	60	30	0	0	30	2																Ստ.
	Փիլիսոփայության հիմունքներ	4	120	30	30	0	60					4												Ստ.
	Ֆիզդաստիարակություն	0							x		x		x		x									Ստ.
	Կամընտրական դասընթացներ	4	120	60	0	0	60																	
	Տնտեսագիտության հիմունքներ	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Գործարարության հիմունքներ	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Իրավունքի հիմունքներ	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Քաղաքագիտության հիմունքներ	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Կրոնագիտության հիմունքներ	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Մշակութաբանության հիմունքներ	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Հոգեբանության հիմունքներ	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Տրամաբանության հիմունքներ	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Բարոյագիտության հիմունքներ	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Սոցիոլոգիայի հիմունքներ	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	2	60	30	0	0	30					2												Ստ.
	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	2	60		30	0	30					2												Ստ.
	ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	202																						
	Պարտադիր մասնագիտական դասընթացներ	137																						
	Դասընթաց-1																							
	Դասընթաց-2																							
	Հատուկ մասնագիտական դասընթացներ - 1	24																						
	Դասընթաց-1																							
	Դասընթաց-2																							
	Հատուկ մասնագիտական դասընթացներ - 2	24																						
	Դասընթաց-1																							
	Դասընթաց-2																							
	Հատուկ մասնագիտական դասընթացներ - 3	24																						
	Դասընթաց-1																							
	Դասընթաց-2																							
	Հարակից կրթական ծրագրերից ընտրված դասընթացներ	15																						
	Դասընթաց-1																							
	Դասընթաց-2																							
	Կրթական այլ մոդուլներ	26												0				0				26		
	Մասնագիտական պրակտիկա	6																				6		Ստ.
	Ավարտական աշխատանք	20																				20		Պաշտ.
	ԸՆԴԱՄԵՆԸ	240	1140	180	390	0	570	31	30	31	30	31	30	31	30	30	28	30	28	30	28	26	0	240
	Ուսումնական/գիտական մոդուլների քանակը																							

ՀԱՎԵԼՎԱԾ-3. Հեռակա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի օրինակելի ձևաթերթ-1

Թվանիշ	Ուսումնական մոդուլի անվանումը	Կրեդիտներ	Ուսումնական բեռնվածությունը, ժամ					Կիսամյակներ										Գնահատման ձևը
								1	2	3	4	5	6	7	8	9	10	
			Ընդ.	Դասախ.	Գործ/սեմ.	Լաբ.	Ինք.	Կրդ.	Կրդ.	Կրդ.	Կրդ.	Կրդ.	Կրդ.	Կրդ.	Կրդ.	Կրդ.	Կրդ.	
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	**38**	**1140**	**60**	**140**	**0**	**900**											
	Պարտադիր դասընթացներ	**34**	**1020**	**40**	**130**	**0**	**850**											
	Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	2	60	0	10	0	50	2										Ստ.
	Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2	2	60	0	10	0	50		2									Ստ.
	Հայոց պատմության հիմնահարցեր-1	2	60	5	5	0	50	2										Ստ.
	Հայոց պատմության հիմնահարցեր-2	2	60	5	5	0	50		2									Ստ.
	Անգլերեն/Գերմաներեն/Ֆրանսերեն/Արևելյան լեզու-1	4	120	0	20	0	100	4										Ստ.
	Անգլերեն/Գերմաներեն/Ֆրանսերեն/Արևելյան լեզու -2	4	120	0	20	0	100		4									Ստ.
	Ռուսերեն-1	4	120	0	20	0	100	4										Ստ.
	Ռուսերեն-2	4	120	0	20	0	100		4									Ստ.
	Քաղ. պաշտպան. և արտակարգ իրավիճ. բնակչ. առաջին բուժօգն.	4	120	10	10	0	100	4										Ստ.
	Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	2	60	10	0	0	50	2										Ստ.
	Փիլիսոփայության հիմունքներ	4	120	10	10	0	100			4								Ստ.
	Կամընտրական դասընթացներ	4	120	20	10	0	50											
	Տնտեսագիտության հիմունքներ	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Գործարարության հիմունքներ	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Քաղաքագիտության հիմունքներ	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Մշակութաբանության հիմունքներ	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Կրոնագիտության հիմունքներ	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Բարոյագիտության հիմունքներ	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Սոցիոլոգիայի հիմունքներ	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Տրամաբանության հիմունքներ	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Իրավունքի հիմունքներ	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Հոգեբանության հիմունքներ	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	2	60	0	10	0	50			2								Ստ.
	ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	**202**																
	Պարտադիր դասընթացներ	**149**																
	Դասընթաց-1																	
	Դասընթաց-2																	
	Կամընտրական դասընթացներ	**12**																
	Դասընթաց-1																	
	Դասընթաց-2																	
	Հարակից կրթական ծրագրերից ընտրված դասընթացներ (8-9-րդ կիսամյակներ)	**15**																
	Դասընթաց-1																	
	Դասընթաց-2																	
	Կրթական այլ մոդուլներ	26											0		0		26	
	Մասնագիտական պրակտիկա	6															6	Ստ.
	Ավարտական աշխատանք	20															20	Պաշտ.
	ԸՆԴԱՄԵՆԸ	240	1140	60	140	0	900	24	24	24	24	24	24	24	24	22	26	240
	Ուսումնական/գիտական մոդուլների քանակը																	

ՀԱՎԵԼՎԱԾ-4. Հեռակա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի օրինակելի ձևաթերթ-2

Թվանիշ	Ուսումնական մոդուլի անվանումը	Կredիտ-ներ	Ուսումնական բեռնվածությունը, ժամ					Կիսամյակներ										Գնահատման ձևը
			Ընդ.	Դասախ.	Գործ./սեմ.	Լաբ.	Ինք.	1 Կրդ.	2 Կրդ.	3 Կրդ.	4 Կրդ.	5 Կրդ.	6 Կրդ.	7 Կրդ.	8 Կրդ.	9 Կրդ.	10 Կրդ.	
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	**38**	**1140**	**60**	**140**	**0**	**900**											
	Պարտադիր դասընթացներ	**34**	**1020**	**40**	**130**	**0**	**850**											
	Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	2	60	0	10	0	50	2										Ստ.
	Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2	2	60	0	10	0	50		2									Ստ.
	Հայոց պատմության հիմնահարցեր-1	2	60	5	5	0	50	2										Ստ.
	Հայոց պատմության հիմնահարցեր-2	2	60	5	5	0	50		2									Ստ.
	Անգլերեն/Գերմաներեն/Ֆրանսերեն/Արևելյան լեզու-1	4	120	0	20	0	100	4										Ստ.
	Անգլերեն/Գերմաներեն/Ֆրանսերեն/Արևելյան լեզու -2	4	120	0	20	0	100		4									Ստ.
	Ռուսերեն-1	4	120	0	20	0	100	4										Ստ.
	Ռուսերեն-2	4	120	0	20	0	100		4									Ստ.
	Քաղ. պաշտպան. և արտակարգ իրավիճ. բնակչ. առաջին բուժօգն.	4	120	10	10	0	100	4										Ստ.
	Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	2	60	10	0	0	50	2										Ստ.
	Փիլիսոփայության հիմունքներ	4	120	10	10	0	100				4							Ստ.
	Կամընտրական դասընթացներ	4	120	20	10	0	50											
	Տնտեսագիտության հիմունքներ	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Գործարարության հիմունքներ	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Քաղաքագիտության հիմունքներ	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Մշակութաբանության հիմունքներ	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Կրոնագիտության հիմունքներ	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Բարոյագիտության հիմունքներ	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Սոցիոլոգիայի հիմունքներ	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Տրամաբանության հիմունքներ	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Իրավունքի հիմունքներ	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Հոգեբանության հիմունքներ	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	2	60	10	0	0	50			2								Ստ.
	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	2	60	0	10	0	50			2								Ստ.
	ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	**202**																
	Պարտադիր դասընթացներ	**137**																
	Դասընթաց-1																	
	Դասընթաց-2																	
	Հատուկ մասնագիտական դասընթացներ - 1	**24**																
	Դասընթաց-1																	
	Դասընթաց-2																	
	Հատուկ մասնագիտական դասընթացներ - 2	**24**																
	Դասընթաց-1																	
	Դասընթաց-2																	
	Հատուկ մասնագիտական դասընթացներ - 3	**24**																
	Դասընթաց-1																	
	Դասընթաց-2																	
	Հարակից կրթական ծրագրերից ընտրված դասընթացներ	**15**																
	Դասընթաց-1																	
	Դասընթաց-2																	
	Կրթական այլ մոդուլներ	**26**											0		0		26	
	Մասնագիտական պրակտիկա	6															6	Ստ.
	Ավարտական աշխատանք	20															20	Պաշտ.
	ԸՆԴԱՄԵՆԸ	240	1140	60	140	0	900	24	24	24	24	24	24	24	24	22	26	240
	Ուսումնական/գիտական մոդուլների քանակը																	